



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

12

**ԳԼՈՒԽ ԶԷ ՎԱՍՆ ՈՐ ԶԵԿԵՂԵՑՈՅ ՊՏՈՒՂ ԱՐԳԵԼԵՆ ԵՒ ՈՉ
ՏԱՆ**

Եւ մարդ, որ յանգէտս կերիցէ զսրբութիւնսն, յաւելցէ ի նոյն զհինգերորդ մասն եւ տացէ զսրբութիւնն ցքահանայն: Եւ մի՛ պղծեսցէ զսրբութիւնն Իսրայէլի, զոր զատուցին նոքա Տեառն, եւ ածիցեն ի վերայ իւրեանց անօրէնութիւն յանցանաց՝ ուտելովն իւրեանց զսրբութիւն սրբութեանցն, զի ես եմ Տէր, որ սրբեմ զնոսա: Աստուածային դատաստանս նշանակեալ անփոփոխ կացցէ յեկեղեցի սուրբ:

ԳԼՈՒԽ ԶԸ ՎԱՍՆ ՅԻՇՈՅՆԱՏՈՒԱՅ

Եւ ել որդի կնոջ Իսրայէլացոյ, եւ նա էր որդի առն Եգիպտացոյ ի մէջ որդոցն Իսրայէլի, եւ կոռեցան ի բանակին՝ որ յԻսրայէլացոյ անտի էր՝ եւ այր մի Իսրայէլացի: Եւ անուանեալ որդի կնոջն Իսրայէլացոյ զԱնունն՝ անէծ. եւ ածին առ Մովսէս: Եւ անուն մօր նորա Սաղամիթ, դուստր Դաբբեայ, յազգէ Դանայ: Եւ ածին զնա ի պահ՝ դատել զնա հրամանաւ Տեառն: Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. հանէք զայրն, որ անէծ, արտաքոյ բնակին, եւ դիցեն, որք լուանն, զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ նորա, եւ քարակոծեսցեն զնա ամենայն ժողովուրդքն: Եւ ընդ որդիսն Իսրայէլի խօսեսցիս եւ ասասցես զնոսա. այր ոք, որ անիծանէ զԱստուած, մեղս ընկալցի, զի անուանեաց զանուն Տեառն, մահու մեղցի, քարընկեցութեամբ քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուրդքն. եթէ

պանդուխտ իցէ եւ եթէ բնիկ, յանուանել նորա զանուն տեառն՝ սատակեացի: Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի, եւ հանին զայրն, որ անէծն, արտաքոյ բանակին, եւ քարկոծ արարին զնա ամենայն ժողովուրդքն քարամբք: Եւ որդիքն Իսրայէլի արարին՝ որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի: Իրաւացի է զդատաստանս զայս յեղափոխել այսպէս. եթէ ոք, շարժեալ ի սատանայէ, զանունն Քրիստոսի հայիոյէ, կամ զխաչ, կամ զեկեղեցի, կամ զքահանայ ի կոհն իւրեանց, եւ կամ զմկրտութիւն, եթէ մինն յայլազգեաց իցէ, որպէս եւ անդ պատահեցաւ, եթէ քարկոծել եւ եթէ այլով օրինակաւ՝ սպանանել արժան է. ապա թէ քրիստոնեայք՝ մահու դատաստան լիցի, քննելով զպատահումն:

ԳԼՈՒԽ ԶԹ ՎԱՍՆ ՈՐ ՄՊԱՆԱՆԵՆ ԶԱՆԱՍՈՒՆ

Եւ որ հարկանէ զանասուն, անձն ընդ անձին տուծեացի: Ըստ իւր յայտնի տեսութեանն եւ ի մեզ կացցէ դատաստանդ աստուածային: Սակայն դատաստան կոչի, իբր զի քննեացի մախանօք հարեալն:

ԳԼՈՒԽ Դ ՎԱՍՆ ՎԱՃԱՌՈՂԱՅ ԵՒ ԳՆՈՂԱՅ ԶԵՐԿԻ

Եթէ աղքատացի եղբայր քո, որ ընդ քեզ է, եւ վաճառեցէ ի կալուածոյ իւրոյ, եւ եկեացէ մերձաւորիչն, որ մերձաւոր է նորա, եւ փրկեացէ զվաճառն եղբօր իւրոյ: Ապա թէ չիցէ ուրուք մերձաւորիչ, եւ ձեռնհաս իցէ, եւ գտանիցի նմա բաւական փրկանաց իւրոյց, եւ համարեացէ զամս վաճառին իւրոյ, եւ հատուցէ կարողն առն, որում վաճառեաց նմա, եւ դարձցի ի կալուածս իւր: Ապա թէ ոչ գտցի ի ձեռին նորա բաւական առ ի հատուցանելոյ նմա, եղիցի վաճառ նորա այնմ, որ ստացաւն զնա, մինչեւ յամն թողութեան իւրոյ, եւ դարձցի անդրէն յամին թողութեան իւրոյ եւ եկեացէ ի կալուած իւր: Շատ Աւետարանին հրամանի առաւելութիւն ի Տեառնէ հրամայեցաւ յամենայնս, նմանապէս եւ՝ յիս դատաստանի: Եւ զի ոչ առաւելութեամբ այժմ եւ ոչ հաւասարութեամբ վարինք, պարտ է մեզ փրկանօք լինել: Եթէ վասն աղքատութեան ի կալուածոյ վաճառէ, եղիցին ընդ փրկանօք յազգատոհմէ իւրմէ մինչեւ յերթն ամ: Ըստ Օրինացն գերթն ամն եղաք, բայց առաւելու որքան կար է՝ արժան է, զի ոչ թողու ազատ ըստ Օրինացն, զոր ի դէպ էր թողու նմա ազատս ըստ Օրինացն: Իսկ եթէ ոչ կարիցէ փրկել յերթն ամին, եւ անդ հաստատեացի վաճառն: Ապա թէ ըստ այլոյ

պատճառի վաճառն իցէ, ի նմին ամին հաստատեսցի:

ԳԼՈՒԽ ԴԱ ՎԱՍՆ ՎԱՃԱՌՈՂԱՅ ԵՒ ԳՆՈՂԱՅ ԶՏՈՒՆ

Եթէ վաճառիցէ որ տուն բնակութեան ի պարսպաւոր քաղաքի, եղիցին փրկանք նորա մինչեւ ի կատարել տարոյ ատուրցն վաճառին իւրոյ. օրաթուի լիցի փրկանք նորա: Ապա թէ ոչ փրկեսցի մինչեւ լնուցու տարի նորա ողջոյն, հաստատեսցի տունն, որ իցէ ի պարսաւոր քաղաքի, հաստատութեամբ ստացողին իւրոյ յազգս իւր եւ ելցէ ի թողութեանն: Եւ զվաճառ փարթամաց թէ ոմանց աղքատաց վաճառէ սահմանաւ, վասն ողորմութեան դարձուցանելի է ըստ պայմանին: Իսկ տունք, որ յաւանս իցեն, որոց պարիսպ ոչ իցէ շուրջանակի, ընդ անդս երկրի համարեսցին եւ հանապազ ընդ փրկանօք լիցին եւ ի թողութեանն ելցեն: Եւ զայս դատաստան այսպէս առցուք. զի թէպէտ եւ ամ թողութեան ոչ է առ մեզ, սակայն զամսն փրկանաց հաստատուն կալցուք, պակասեալք յառաւելութենէ. նմանապէս եւ՝ զաւուրսն:

ԳԼՈՒԽ ԴԲ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ԳՆԵՆ ԵՒ ԾԱԽԵՆ ՏՈՒՆ

Եւ ի քաղաքս Ղեւտացոցն տունք, որ ի քաղաքսն կալուածոց նոցա իցեն, ընդ փրկանօք լիցին հանապազ ի մէջ Ղեւտացոց: Եւ որ որ փրկեսցէ ի Ղեւտացոց անտի, ելցէ վաճառ տանց քաղաքաց կալուածոց նոցա ի թողութեան, զի տունք քաղաքաց Ղեւտացոց՝ կալուածք նոցա են ի մէջ Իսրայէլի որդոցն: Եւ ազարակքն, զատուցեալք ի քաղաքս նոցա, մի՛ վաճառեսցին, զի կալուած յաւիտենական է այն նոցա: Պարտ է եւ զայս դատաստանս այսպէս իմանալ. զի քահանայք գտուն բնակութեան իւրեանց վաճառել իշխան լիցին առ քահանայս, եւ միշտ ընդ փրկանօք լիցին առաւելութեամբ, քան աշխարհականաց վաճառք: Եւ ազարակք եւ այլ ստացուածք, զատուցեալք յեկեղեցի, մի՛ վաճառեսցին, զի կալուած է յաւիտենական այն նոցա: Ըստ այսմ եղիցի եւ այս իրաւունք, թէ եւ ամ թողութեան առ մեզ ոչ է: Նաեւ յամենայն դատաստանսդ ծախք ստացողին տեսցին ի փրկելն:

ԳԼՈՒԽ ԴԳ ՎԱՍՆ ԶՐԱՂԱՅԱՑ

Եւ յաղագս աղքատութեան վաճառեալ ջրաղացք զամ մի ընդ փրկանօք լիցին ինքեանց եւ ազգականաց, իսկ եթէ այլազգ՝ ի նմին ամի հաստատեսցի:

ԳԼՈՒԽ ԴԴ ՎԱՍՆ ՈՐՔ ԳՆԵՆ ԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԿԱՄ ԾԱԽԵՆ

Եւ գշորքոտանիս վաճառել՝ երից վկայից առաջի հաստատեսցի այսոքիկ, զի մի գողունի իցէ, եւ մի հնակաղ եւ հնահազ, եւ մի գիշերակոյր, եւ մի անգնալ ի կամրջի, եւ մի հարկանող ոտիւք: Յայսցանէ գտեալ ի բեռնակիրս, բայց ի գողունէից, մինչեւ յամ մի անդրէն դարձցի կամ ի գնոյն անկցի ըստ արժանոյն եւ կամ տեառն հաստատեսցի: Իսկ գողունին յամենայն ժամ դարձցի. եթէ յայտնեալ՝ առաջինն առցէ տէրն, եւ զգինն ի վաճառողէն առցէ՝ որ գնեացն: Այլ արտաքոյ այսմ պատճառաց՝ մինչեւ յեւթն օր փորձի եւ վճիռ հատցի, եւ թէ ոչ դարձուցէ՝ հաստատեալ լիցի վաճառն: Իսկ վաճառողին նոյն կացցէ սահման ըստ արժանոյն վաճառել: Եւ յայլսն գնոյն պահել ի վաճառսն զսահման, որպէս վաճառողին, նմանապէս եւ գնողին:

ԳԼՈՒԽ ԴԵ ՎԱՍՆ ՈՐՔ ԵԶԻՆՍ ԾԱԽԵՆ

Եւ զայս եւս վկայիւք հաստատեսցեն, որք վաճառեն զեզինս, զի փորձ ի հերկ, եւ ի սայլ, եւ ի կալ իցէ, մի հնակաղ, եւ հնահազ, եւ գիշերակոյր, եւ հարկանող, եւ մի գողունի: Մինչեւ յամ մի լինել այդոցիկ փորձի՝ դարձցի, եւ գողունին՝ յամենայն ժամ. եւ յայլսն եւթն օր փորձեսցի: Իսկ անմղիցն յայլսն՝ դարձցի, բայց ի լծոյ, ի հերկ, եւ ի սայլ, եւ ի կալ, որոց փորձն անյայտ է կանխաւ:

ԳԼՈՒԽ ԴԶ ՎԱՍՆ ՈՐ ԿՈՎ ԾԱԽԵՆ

Նմանապէս եւ յաղագս զկովս վաճառելոյ զայլսն, վկայիւք հաստատեսցէ ընդ այնոսիկ, զի ազգաւ յիւրաքանչիւր ամի ծնանիցին, եւ յաղագս սոցին յամի դարձցին՝ ըստ արժանոյն զգինն հաստատելով եւ կամ տեառն լինելով: Եւ յայլսն փորձի եւթն օր:

ԳԼՈՒԽ ԴԷ ՎԱՍՆ ՈՐՔ ԶՄԵՂՈՒՔ ԾԱԽԵՆ ՓԵԹԱԿՈՎ

Եւ մեղուք վաճառեալ յաշնան ըստ մեղեր, զոր ունի, հաստատեսցի սերկանն: Իսկ ըստ պիտոյից անկշիռ վաճառեալ կամ կշռաւ նովին փեթակաւ եւ առեալ արտաքս եւ պակաս գտեալ, լցցի կշիռն ի վաճառողէն, ապա թէ ոչ՝ մի՛ լիցի այդ պատիր վաճառ: Իսկ առաւել գտեալն, ոչ յոյժ եւ ոչ խաբէութեամբ, մի՛ դարձցի, զի վասն յուսոյ դորին գնէ: Եւ գարնան սերմանոց վաճառեալ եւ եղեալ ի մեղուց, մինչեւ ի տասն օր կամ քսան փորձի. վճիռ վկայիւք հաստատեսցի, որպէս զի մտանելն եւ ելանելն ուղիղ ցուցցի, հաստատեսցի վաճառն: Ապա թէ թիրութեամբ յաւուրս վճռին կարծիս լիցի գողութեան եւ մահու առաջնորդին, ի վաճառողն դարձցի: Զկնի կարծեացն բառնալոյ աւուրցն՝ գնողին այդպիսի վնասդ լիցի: Ի կերակրոյ մեռեալն եւ յամի անպտուղ եղեալն՝ գնողին լիցի:

ԳԼՈՒԽ ԴԸ ՎԱՍՆ ՈՐ ԿԱՐԱՍ ԾԱԽԵՆ ԿԱՄ ԱՅԼ ՅԵՂ ԱՆՕԹ

Իսկ կարաս վաճառեալ եւ գնեալ հաստատեսցի, յորժամ լցեալ ողջ զարկեալն պահիցէ յինքն զգինին: Ապա թէ կարծիք բեկման ի թրծմանէ իցէ, եւ զգինին կորուսցէ, միմիայն զկարասն գործողն առնու, այլ եւ զկէս վնասուն տուծեսցի: Ապա թէ անկարծիս իցէ ի բեկմանէ, եւ ի թաղելն եղեւ կարծիսն, անտոյժ լիցի վաճառողն: Այլ եթէ յայդմանէ երկբայեսցի, զամանն միայն վաճառողն տուծեսցի: Այդ ըստ այդմ լիցին ի փոքունսն եւ ի մեծամեծսն:

ԳԼՈՒԽ ԴԹ ՎԱՍՆ ՈՐ ԱՅԳԻ ԵՒ ԴՐԱԽՏ ԿԱՊԼԵՆ

Վաճառել եւ գնել բազմաց հանդիպի զպտուղս յամի՝ յուսով շահի: Եւ թէ լիցի պակասիլ արժան է վաճառողին ամբողջ զգլուխն պահել, ոչ միայն յաղագս յուսոյն, այլ վասն աշխատութեանն: Եւ եթէ շահիցի, որ չիցէ խաբէութեամբ, մի՛ գղջացեալ վաճառողն դարձուցէ, զի վաճառք յաջողմամբ բազմապատիկ շահս տան: Սակայն աւուրք փորձի երեք վկայիւք լիցի տասն օր. եւ կատարածն ցուցաւ ըստ իրաւանց:

ԳԼՈՒԽ Ը ՎԱՍՆ ԶՐԱՂԱՅԱՅ ՎԱՐՁԵԼՈՅ

Եւ զայսպիսիս ըստ գլխոյ առեալ՝ վկայիւք հաստատեսցի: Շահիլն անգեղջ իցէ տուողին, եւ մի՛ տացէ փոխանակ շահին տուգանս: Եւ իւր լիցի պատրաստել զկազմուածն ամենայն եւ վնասք՝ ըստ կարգի իրաց եղեալ, իսկ

յանպատրաստութենէ եղեալ՝ առողին լիցի՝ ի քար, ի նաւ, յերկաթ եւ յայլսն ամենայն, եւ գողացեալն: Իսկ այրեալն, եթէ ի պատճառս տեառն իցէ՝ նմա լիցի, եւ թէ ի պատճառս առողին՝ նմա: Ըստ այսմ դատեսցի եւ այլն ամենայն այդպիսի, որ ինչ միանգամ եւ իցէ:

ԳԼՈՒԽ ԶԱ ՎԱՍՆ ՈՐՔ ՀԱՅՐԵՆԻՔ ԲԱԺԱՆԵՆ ՈՐԴՈՑ

Եւ մատեան դատերքն Սաղպաադու՝ որդոյ Ոփերայ՝ որդոյ Գաղաադու՝ որդոյ Մաքիրայ ի գնդէ Մանասէի՝ որդոյն Յովսէփայ: Եւ այս են անուանք նոցա՝ Մաադա, Նուա, Եգդա, Մեղքա եւ Թերսա: Եւ կացին առաջի Մովսիսի եւ Եղիազարու քահանայի եւ առաջի իշխանացն եւ ամենայն ժողովրդեանն ի դրան խորանին վկայութեան եւ ասեն. հայր մեր մեռաւ յանապատի անդ եւ նա ոչ էր ի մէջ ժողովրդեանն գումարելոցն առաջի Տեառն ի ժողովրդեանն Կորխայ, որ վասն մեղացն իւրոց մեռաւ, եւ որդիք ոչ եղեն նորա: Եւ արդ, մի՛ ջնջեսցի անուն հօր մերոյ ի միջոյ ցեղի իւրոյ, վասն զի ոչ գոյր նորա որդի. տուք մեզ ժառանգութիւն ի մէջ եղբարց հօր մերոյ: Եւ մատոյց Մովսէս գլատաստանս նոցա առաջի Աստուծոյ: Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. ողիղ խօսեցան դատերքն Սաղպաադու, տալով տացես նոցա կալուածս ժառանգութեան ի մէջ եղբարց հօր իրեանց, եւ դիցես զվիճակ հօրն իրեանց գնորօք: Եւ ընդ որդիսն Իսրայէլի խօսեսցիս եւ ասասցես. այր ոք եթէ մեռանիցի, եւ ուստր ոչ է նորա, տացէ զժառանգութիւն իւր դստեր իւրում. եւ եթէ ոչ գուցէ դուստր, տաջիք զժառանգութիւն նորա եղբօր իւրում. եւ եթէ ոչ գուցէ եղբայր, տաջիք զժառանգութիւն նորա հօրեղբօրն իւրում. եւ թէ ոչ գուցեն եղբարք հօր նորա, տաջիք զժառանգութիւն ընտանոյ մերձաւորի իւրոյ. ի ցեղէ նորա ժառանգեցէ գնորայն: Եւ եղիցի որդոցն Իսրայէլի այդ իրաւունք դատաստանի, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի: Անլուծանելի յամենայն հաւատացեալս եւ այս կացցէ վճիռ դատաստանի, զի իւր իսկ է հաւատի գիտողին զամենայն իրաւունս: Զի որդոյ պարտ է ժառանգել, թէ իցէ, ապա թէ ոչ իցէ որդի, դուստրն ժառանգէ զհայրենին, այն, որ ի տանն իցէ անկարգ: Իսկ կարգեալ աղջիկն՝ երկու քոյրն մին որդոյ բաժին առցեն եւ ոչ կարեն ժառանգ լինել: Եւ այս յայտ անտի է, զի ոչ թողին զդստերս Սաղպաադու յօտար ցեղս արանց լինել, զի մի՛ ժառանգութիւնն յօտարս ելցէ: Ապա թէ չիցէ դուստր, եղբայրն ժառանգէ: Իսկ եթէ կարգած աղջիկն կամեսցի իւրովք որդովքն եւ արամբն գալ եւ զհայրենիսն ժառանգել,

նոցա լիցի եւ մի՛ եղբօրն, յորժամ որդի չիցէ եղբօրն, ապա թէ ոչ կամիցի գալ՝
առցէ զբաժինն իւր եւ եղբայրն ժառանգեսցէ: Ապա թէ չիցէ եղբայր, հօրեղբայրն
ժառանգեսցէ: Եւ թէ չիցէ հօրեղբայր, որ ժառանգեսցէ, այլ ընտանի մերձաւոր
ժառանգեսցէ ի ցեղէ հօրն: Որքան մերձաւոր իցէ, հեռաւոր ընտանոյ ոչ հրամայէ.
եւ զցեղս հօրն առնէ ժառանգ եւ ոչ զմօրն, մինչ ի դուստր միայն կացոյց զժառանգ
լինելն: Ապա թէ հօրեղբօրն հրամայէ ժառանգ լինել, յայտ է, զի թէ հայր իցէ, նա
ժառանգէ, եւ թէ մայր, եւ քոյր, եւ կին ոչ ժառանգեն, այլ մասունս առնուն, որպէս
եւ ցուցանի. կնոջն՝ դանգ, եւ քվերն՝ դանգ եւ կէս, եւ մօրն՝ երեք թասու: Այլ
ընտանի մերձաւոր համարիմք, զոր Օրէնքն մինչեւ գշորորդ գարմն հրամայէ
գառականս ոչ յայտնել յառնուլ կին. գայս եւ ի ժառանգաւորսն պահելի է: Իսկ
զկնի այնր ոչ են ժառանգք, իբրեւ անցանի գշորորդ գարմն, այլ ժառանգութիւնն
վիճակ լիցի դատաւորաց, որպէս եւ գրեալ է ի ճառս դատաւորացն ի գիրս: Իսկ
եղբայրն, որ չիցէ համամայր, կէս դանգ պակաս առցէ, ընդ համահայրսն եւ ընդ
համամայրսն ժառանգեսցէ: Ջայս գնոյնս եւ նահապետն Աբրահամ եցոյց, զի ետ
գամենայն ինչսն իւր Իսահակայ որդոյ իւրոյ եւ որդոց հարճիցն ետ պարգեւս եւ
արձակեաց գնոսա: Եւ եթէ ասիցէ որ. աստ՝ պսակ օրհնութեան եւ անդ՝
Քենտուրա կին երկրորդ. սակաւ պակաս. եւ յՕրէնսն անդրանկանն տուաւ
երիցութեան պատիւն: Ըստ այսմ օրինակի եւ հօրեղբայրն լինիցի: Յանդիմանին
յաստուածային օրինացս դատաստանէ մահմետականացն դատաստանք, զի
զդատերս ժառանգ ոչ առնեն հարց, այլ որպէս ընտանիս մասնաւորեն, որոց ոչ
հետեւելի է, այլ անվրէպ՝ աստուածային օրինացս դատաստանաց իրաւամբք: